# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«12» հուլիսի 2016 թվականի N:284-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԻՋԱՎԵՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հանրապետության Շիրակի մարզի Սիզավետ համայնքի ղեկավարի 2016 թվականի հունիսի 20-ի N33 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սիզավետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի մարտի 9-ի նիստի թիվ 32 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սիզավետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Սերգեյ Պողոսյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Վաչագան Վարդանյանի, Հովսեփ Մելիքյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սիզավետ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Մարիամ Ավետիսյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի հուլիսի 3-ին Խորհրդի կազմում հաստատված Հայկանուշ Մուրադյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի հուլիսի 3-ին Խորհրդի կազմում հաստատված Կալեպսի Հակոբյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի հուլիսի 3-ը:

4. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի հուլիսի 3-ին Խորհրդի կազմում հաստատված Թեհմինե Շահինյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի հուլիսի 3-ը:

5. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Ռուդիկ Բերնեցյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

6. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Գագիկ Քոթանջյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Վաչագան Վարդանյանին, Հովսեփ Մելիքյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սիզավետ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արարատ Պողոսյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Նարիմա Մարկոսյանին:

7. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

8. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N135 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հուլիսի «12» N 284-ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՍԻԶԱՎԵՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

| | |
|---|---|
| Քոթանջյան Գագիկ | - Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված, |
| Վարդանյան Վաչագան | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված, |
| Մելիքյան Հովսեփ | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված, |
| Պողոսյան Արարատ | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, |
| Հակոբյան Կալեպսի | - մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված, |
| Մարկոսյան Նարիմա | - մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված, |
| Բերնեցյան Ռուդիկ | - ծնողական խորհրդի կողմից առաջադրված, |
| Շահինյան Թեհմինե | - ծնողական խորհրդի կողմից առաջադրված, |

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է